



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱՐԱՔՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք,
գ. Գայ, Ա. Խաչատրյան-1

24 ապրիլի 2023

ՈՒՂԵՐՁ ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 108-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԹԻՎ

Այսօր Հայոց Մեծ Եղեռնի զոհերի, սրբադասված նահատակների հիշատակին հարգանքի տուրք մատուցելու օրն է: Մենք՝ համայն հայությունը, գլուխ ենք խոնարհում մեկ միլիոն ու կես անմեղ զոհերի հիշատակին: Խաղաղություն նրանց շիրիմներին: 20-րդ դարասկզբին քաղաքակիրթ մարդկության աչքի առջև թուրքի յաթաղանին զոհ գնաց ավելի քան մեկ միլիոն ու կես անմեղ հոգի: Մենք հիշում ենք նաև նրանց, ովքեր, հաղթահարելով անմարդկային տառապանքները, վերապրելով Մեծ եղեռնը, վերահաստատվեցին մայր Հայաստանում կամ սփռվեցին աշխարհով մեկ՝ վառ պահելով հայի ինքնությունը:

Ավա՛ղ, հայրենիքի մի հատվածի կորուստը, մարած կյանքերը հանգեցրին նաև այլ կորուստների. մենք կորցրեցինք մեր՝ դարերով կերտված հոգևոր, նյութական ու մշակութային արժեքները: Ապրիլի 24-ը մեզ համար նաև սթափության օր է: Որպեսզի այլևս երբեք չկրկնվեն նման ոճրագործությունները, անհրաժեշտ է, որ ողջ աշխարհը դատապարտի ու այլևս երբեք չհանդուրժի նման երկույթներ: Ոգեկոչման և հիշատակի ապրիլի 24-րդ օրվա խորհուրդը հստակ է՝ պայքարել որպեսզի Հայոց Ցեղասպանությունն ստանա իրավական, քաղաքական և բարոյական գնահատական, պայքարել որպեսզի աշխարհը դառնա առավել պահանջատեր և անել հնարավորը, որպեսզի չկրկնվեն ցեղասպանությունները: Իսկ այսօր՝ Մեծ եղեռնի 108-րդ տարելիցին, մեր խոնարհումն ու խնկարկումը բերենք 1915թ-ի սրբադասված զոհերի հիշատակին, դառնանք առավել միակամ և համախմբված, շարունակենք ճշմարտության և արդարության վերականգնման ուղին, հանուն մեր նահատակների ու հերոսացած զավակների կառուցենք և հզորացնենք մեր երկիրը՝ ստեղծելով արժանապատիվ ու արժանավայել ապագա, պաշտպանելով մեր ինքնությունն ու իրավունքները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ